

Թերթ կը զրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.

Վեցամս. 5 "

Վրտասահման
Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

Վաճարիկա
2 Տոյ. 30 սէնդ.

ԿԱՆԻՒԻԿ

ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ

DIBAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE



ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ . ԱԶԳՍՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ.

Ե. ՏԱՐԻ

№ 3 ՇԱՐԱԹ 1901

Թիի 229

ԱԶԳԱՅԻՆ

Վանէն Հոկտ. 1 թուականով կը գրեն. — Վանեցին վերջին երկու տարուայ ընթացքին բաւական երկար շունչ մ'առաւ. հունձքը առատ եղաւ աւելի քան երբէք. ընդեզէններ նմանապէս. ցորենի գրիւը (1 գրիւ 6 լիտր) 13.16 շրշ. իսկ գարիինը 6-7 շրշ. Բայց ասոնց հակառակ Վանեցին մանիֆաթուրան սուղ կ'ստանայ գրեթէ տասը առ հարիւր, իսկ բամպակ նո. տեղական բամպակեղէններ սուղ ն յիսուն առ հարիւր:

Մեր կրթական գործը բաւական գոհացուցիչ անցաւ այս տարի. վերջին օգոստոս և սեպտ. ամիսներու մէջ բաւական թուով ուսումնաւարտներ տուին ազգին: Երամեան դպրոցը ունեցաւ 8 ուսումնաւարտներ. միսիոնարաց երկսեռ դպրոցը 18. իսկ Սանդուխտեանի աղջկանց դպրոցը 10 շրջանաւարտուհիներ:

— Պէրպէրեան Յոբելեանի Գանձնաժողովը որոշեր է հաւաքուած նուէրները յանձնել մեծանուն Յոբելեարին, որպէս զի իւր ուզածին պէս վերաչինէ վարժարանը:

— Այն լուսանկարի արժաթեայ շրջանակը զոր Ո. սումն. Խորհուրդը պիտի նուիրէ Յոբելեար Պէրպէրեան էֆէնտիին, ուսուցիչներու մասնակցութեամբ, 45 սանթիմէթը բարձրութիւն և 25 սանթիմէթը լայնութիւն ունի, եւ որուն ճակատը, ոսկեղէն յիշատակարանի մը մէջ, հետեւեալ երկաթեայ վերաառութիւնը կայ. — «Հայ ու-

սույնութիւն Կ. Պոլսոյ Առ Մեծանուն Ո. Յ. Պէրպէրեան. Դաստիարակ և Գրագէտ, ի նուէր Յոբելեանի համանուն վարժարանին, 1876.1901 հոկտեմբեր, ի ձեռն. Ուսումն. Խորհուրդոյ Ազգ. Կեդրոնական Վարչութեան:» Յիշատակարանին վրայ տեղադրէ ձուածեւ պսակ մը կայ՝ որուն մէջ Յոբելեարին անունն սկիիէ սկզբնատառերը կան: Կ'ըսուի թէ շատ արուեստագիտորէն պատրաստուած գործ մըն է ասիկա:

— Գահիրէէն կը գրեն թէ Պատրիարքարանէ տեղւոյն առաջնորդին ուղղուած տնօրինութեան համեմատ, Գաբրիէլ Զէնճիրճեան քհն. վերջնապէս կարգաւոյժ եղել է և իր քահանայական տարազէն մերկացած հասարակ անհատի պէս կը պտտի, ժամագործութեան պարապելով:

Հայկական Եկեղեցի ի Մասրաւ, (Հնդկաստան)

«Մատրաւ հասնելուս, սեպտեմբերի մէջտեղերը, իմացայ թէ Հայ եկեղեցի մը կայ քաղաքին մէջ: Առաջին պատեհութեամբ դուրս ելայ զայն գտնելու: Հայկական փողոցին, Քրիստոնէական Քուէճ Զըրչէն քիչ հեռու կը գտնուի յիշեալ եկեղեցին. ներս մտնելուս հանդիպեցայ Մաշտոց Իսրայէլեան վարդապետին, Հայ մը, Պարոնաստանէն, որ չորս տարիէ ի վեր հոս կը գտնուի: Ժամու մը չափ տեսակցեցանք եկեղեցիի գաւթին մէջ որու սայլայատակը կազմուած է այն հայերու տապանաքարերով, որոնք մեծապէս օժանդակած են եկեղեցական շէնքերուն: Եկեղեցին ինքնին բոլորովին ժամանակակից երևոյթ մը ունի, բաղդատմամբ Հայաստանի հին

եկեղեցիներուն, թէև ան հիմնուած է 1712 ին։ Այժմ քաղաքին մէջ միայն չորս Հայ ընտանիքներ կան։ Ժամանակաւ քառասուն Հայ ընտանիքներ գտնուած են, որոց բոլորն ալ հարուստ։ Հայկական փողոց ըստածը հիմա միայն մէկ Հայ ընտանիք կը պարունակէ։ Եկեղեցին գեղեցիկ պարտէզ մը ունի իր շրջափակին մէջ և այսպիսեալ վայելուչ և առողջարար գիրք մը կը գըրուէ։ Շաբաթը երկու անգամ միայն կրօնական հանգէս տեղի կունենայ և այս միայն կիւրակէ օրերը, լուր օրերու մէջ որեւէ հանգէս տեղի չունենար։ Կ'ըսուի թէ Կաթիկոսի մէջ 350 Հայ տուններ կան։ Հայեր կը գտնուին նաև Հնդկաստանի սերիշ մասերուն մէջ։

(Կոչնակ)

Տր. Պարթըն

ՊՈԼԿԱՐԻՈՅ ՀԱՅՈՑ ՆԱԽԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Պոլկարիոյ հայոց հանրային գործերը չը պիտի դադարին տուժելէ մինչև որ չկառավարուին պահանջուած օրէնքներու համաձայն, զորս դիւրին է իւրացնել թարգմանաբար ուսումնասիրելով և զորս պէտք է գործադրուին մշտապէս ձեռնհասներու ձեռքովը և ժողովրդեան անմիջական վերահսկողութեամբը։ Առանց այս վիճակի գոյութեան, արդիւնքը բնականաբար շատ անպատասխան պիտի ըլլար ինչ որ արդէն կը վկայուի լրագրութենէն, այսինքն սոսկալի անիշխանութիւն մը, ուղբալի կերպով անբարոյականացում մը ժողովրդային խորհուրդներու ուրիշ խօսքով ջուրի վրայ առանց զեկի նաւ մը որ մատնուած է կորստեան։

Կրթական օրէնքը, ընդհանրապէս կը պահանջէ ներկայացնել 1) վկայական ուսուցչութեան եւ 2) վկայական բարի ծառայութեանց։ Առանց այս վկայականներու, վարժարանը բացարձակապէս չը պէտք է ճանչնայ և ընդունի իբրեւ «ուսուցիչ» եւ ոչ մի անձ. իսկ ուսուցիչ կրնան ըլլալ միայն անոնք որ աւարտած ըլլան Գիմնազիոնը և յետոյ լրացուցած վարժապետանոցը։ Երկրորդը, մեր մէջ, չունի գոյութիւն, եւ շատ քիչեր կը գտնուին զայն լրացուցած ուրեմն շատ քիչ եղած կըլլան մեր մանկավարժները բառիս իսկական եւ իրական նշանակութեամբը։ Կրթական օրէնքի խտապահանջ գոյութիւնը եւ անոր խցմամիտ գործադրութիւնը բնականաբար պիտի պահանջէին իրենց պաշտօնին գիտակցութիւնը ունեցող մանկավարժներ, որով պիտի քաջալերուի մանկավարժութիւնը և հետեւաբար պիտի կրնայինք ունենալ արդարեւ կարող մանկավարժներ։ Առ ի չգոյէ մանկավարժներու իբրեւ ուսուցիչ ընդունելի կը մնային Գիմնազեան

աւարտողները եւ ոչ ուրիշները։ Այս պարագային մէջ, հետեւաբար Պոլկարիոյ հայ վարժարաններու մէջ «ուսուցիչ» պիտի ընդունուին Գիմնազիոն աւարտողները։ Ուստի իրենցմէ անհրաժեշտ պիտի պահանջուէր ներկայացնել 1) վկայական Գիմնազիոնի աւարտման և 2) վկայական բարի ծառայութեանց։ Ահա միմիայն այսպէս, մաքրուելով կրթական հրապարակի անարժանութիւնները և անմաքրութիւնները, Պոլկարիոյ հայոց նախակրթութիւնը պիտի կրնայ ըլլալ շատ խնամուած։ Նպատակը կը պահանջէ անհրաժեշտաբար, օգուտ և արդիւնք. ահա մանուանդ միակ պայմանը քաջալերութեանց։

Գիւան Ընդհ. Գառնիսկութեան

Վառնա Նահանգի

Թիւ 5298

1 Նոյ. 1901

ԱՆԴՈՐՐԱԳԻՐ

Ներկայ անդորրագիրը կը տրուի Պ. Թորոս Թորամանեանի, անոր համար որ խմբակի մը կողմէ յիշեալին դէմ իշխանութեան մատուցուած թիւ 6350 հետապնդումի խնդիրը դադարած է, վասն զի պատժական օրէնքի 344 և 349 յօդուածներու ենթակայ ու է յանձնապարտութեան հետքեր չեն հաստատուած և կարելիութիւն ալ չի կայ առ այժմ գտնել այսպիսի հետքեր։

Ստորագր. Տեղակալ Ընդհ. Գառնիսկութեան
Թ. Ա. ԲԸՐՃԻԷՅ

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Այս չորեքշաբթի գիշեր «Վէսէլ» հայ դերասանական խումբը մեծ յաջողութեամբ ներկայացուց Փարիզու Հնամաճառը անուն ընտիր թատերախաղը, ի նպատակ տեղւոյս Հրէից վարժարանին։ Արդարեւ գովելի է «Վէսէլ» խմբին այսպիսի բարոյալից տրամաբան մէջ ունեցած եռանդը՝ որ նոյն գիշեր ալ պատկուեցաւ գեղեցիկ փունջով մը ի վարձատրութիւն իրենց արժանեաց։

Կը լսենք թէ ըստ խնդրանաց թատերաշիրաց, յառաջիկայ հինգշաբթի գիշեր ալ պիտի ներկայացուի յիշեալ թատերախաղը. կը յուսանք թէ մերայինք ալ իրենց արդիւնաբեր ներկայութեամբը պիտի քաջալերեն Վէսէլ խումբը որ պիտի ստիպուի հետզհետէ ուրիշ նոր խաղեր տեսարան հանելու։

Կ Ի Ն Ը

Ուշտ մէ զոր Աստուած կը տայ անցնելու համար կեանքի անապատը, կ'ըսէ Ղուբանը:

Կինը շինուած է մասնաւորապէս հաճոյանալու համար մարդուն: Ռուսո:

Քու բերանը—ծաղիկ մը զոր պիտի ուզէի միշտ ունենալ բերնի վրայ: Լ. Պիտեր:

Կնոջ կուրծքը պիտի դիեցնէ տղան և պիտի զուարճացնէ հայրը: Մոնտանէս:

Սէրը և քուռը չեն կրնար ծածկուիլ: Ամուսնութիւնը սիրոյ դերեզմանն է: — Աստուած ըստեղծեց կինը սիրոյ համար: Ռուսո:

Սէրը տիեզերքի հոգին է: Տիկինն տեղադրէ:

Ոչինչ կ'արդելէ որ մի կին չսիրուի երկու մարդէն, և մի մարդ երկու կանէն: Օրենսդր:

Սպաննացիները կը գասաւորեն կինը այսպէս. երիտասարդ աղջիկները ոսկիէ են, ամուսնացած կիները արծաթէ են, այրիները պղնձէ են, ծերերը թիթեղէ են:

15 տարեկան կինը կ'երազէ սէր: 25 տարեկանին նա կը ճաշակէ սէրը: 35 տարեկանին նա կը զոհուի սիրոյ: 40 տարեկանին նա կը ցաւի զայն: 50 տարեկանին նա կը յիշէ զայն: սէրը կնոջ ամբողջ կեանքն է: — Յուսահատութիւնը կը բնակի այնտեղ ուր կինը անցած է Սուրէ:

(Անտիֆոթէսի Ամուրեօզ)

Տ Ե Ր Ե Պ Ի Ք

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ:

Գամշաթքա

Ի նպատակ Որբախնամի կազմակերպուած թատերական ներկայացումը յաջողապէս տրուեցաւ «Վէսէլո» խմբին կողմէ, սակայն Գործ. ժողովոյ և դիւանին հասցէին շալկուած ներդրողականներուն չափ չի գրուեցաւ: Եթէ իր պարտքը կատարող Գործ. ժողովի մը համար անչափ գովեստ պիտի շալկենք, Որբերու կեդրոնական Յանձնաժողովին համար ամենօրեայ թերթ մը հրատարակելու ենք գովեստներով լեցուն: Որբերը մեր զաւկներն են, անոնց հանգէպ ունեցած պարտականութիւննիս կատարած ատեն գովասանելու պէտք չունինք. բայց ի՞նչ կըսեմ, ո՞վ փառասիրութիւն, յաղթանակը քու-

կըդ է, ի վերայ տանեաց քարոզեսցիս, (Բոժ. մանաւանդ ի բերանոյ «մասնակցող»ի . . . պիտի զաւարթներուն:)

ՍՈՒՐԵԱՆ

Քաֆէ քօմէրսիալ

Շահրիմանի և Լ. Սարգիսեանի աղտոտ անակնկալի ազդեցութենէն ազդայնոց յուզեալ միտքերը տակաւին չի հանդարտած՝ Յ. Խաչիկեան անուն ազգային մը հրապարակ կիջնէ և բարոյական աշխարհէն անհետացած այդ երկու գատապարտեալները մեղադրող խմբագրի մը երեսին կը պոռայ. «Ձի՞ տեսանես զչիւղ յական եղբօր քո և ի քում յական զգերանդ ո՛չ նըշմարես . . . »:

Բոժ. — Իշխէ ասոր կըսեն խաթմեղի անակնկալ:

Վարժարան

Մեր վարժուհին՝ աշակերտուհիներէն երկուքին պատուիրեց որ թերթ մը խապս թաղթ և ալիւր ճարելով, վարժարանին պատուհաններէն երկուքին կոտրած ապակիներուն տեղը փակցունեն. իսկ հարող աշակերտուհիներուն ալ պատուիրեց որ՝ ցուրտէն չի սառելու համար իւրաքանչիւրը տունէն մէյմէկ վառելափայտ թեւին տակ դրած առաւօտուն վարժարան գայ:

Ուսանող մը

Ուղիցա սագալլը

Անցեալ շաբթուան ցուրտին՝ Աղջկանց կըրթարանի աշակերտները՝ վառուած սոպաներուն շնորհիւ քրտինքիաշ ըլլալու աստիճան տաքութիւն զգացին, իսկ Աղգ. վարժարանի աշակերտները՝ չի վառուած սոպաներուն շնորհիւ թիւիլ թիւիլ դողացին:

Ա Յ Ի Ն Ե Ի Լ Ե Թ Ա Յ Ի Ք

Պ Ի Ն Պ Ի Ր Ա Տ Է Տ

(ՄԻՒՆՏԵԻԲԱԹԸ)

Կիւտիւրիւճիւ Ֆարալար վէ Հիբեայէլէր. Մարիւմաթը Ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. Ֆէննի Էյլէնճէլէր վէ Բէսիմլի Պիլմէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ. օլուպ, բէյտէրբէյ նէշր օլունան մէղքիւր քիթապըն պիւրինճի ճիւտի խիթամ պուլուպ, իտարէխանէմիլտէ ստթըլմագտա աըր. Ֆիյ 2 ֆրնք.

ԶԱՆԱԶԱՆՔ

Եղեկսրական Մկրտս

* * * Զիեքը, ամէն քաղաքակիրթ երկիրներու մէջ, դժբաղդ կենդանիներ համարուած են, քանի որ իրենց գլխուն վերեւ ունին անխիղճ ձիւպան մը, որ ամէն վայրկեան մտրակի ուժգին հարուածներ կը տեղացնէ հայհուհներու տարափէ մը զատ, ձիուն և անոր ազգականներուն հասցէին ուղղուած: Բարեբաղդաբար Ռուսիա բացառութիւն կը կազմէ: Բեդերսպուրկի, Մոսկուայի, Օտեսայի մէջ և ուրիշ տեղեր կառապաններուն արգիլուած է մտրակ գործածել: Այս արգելքը լաւագոյն արգիւնքներ յառաջ բերած է, ծնունդ տալով նոր գիւտի մը, որուն օգտակարութիւնը անժխտելի է: Ռուս ճարտարագէտ մը յաջողեցաւ հնարել ելեկտրական ասպազէն մը, որով ձիերը ամենայն դիւրութեամբ կը կառավարուին: Ասպազէնին ամէն մասերուն մէջ կը գտնուի պղինձէ թել մը, որ կապուած է կառապանին ամրակիին ասակ ղետեղուած ելեկտրական բախացի մը, այս կերպով կառապանը կրնայ ըստ կամքս գործածել: Հոսանքը, և ելեկտրական մտրակի թելը, անվնաս հարուած մը սալ իր ձիուն, որ արագէս մասնակից կ'ըլլայ ելեկտրականութեան բարիքներուն:

Զայնագրով Կտակ

Բաւական ժամանակ կայ որ Սմօլէնսքի կառավարչութեան մէջ հարուստ կալուածատէր մը մեռած էր:

Կտակ ձգած չ'էր:

Արդ, քանի մը օր կայ երբ դիպուածաւ առեանի վճիռները գործադրող պաշտօնեաներն իրենքուք տուի մը բացին տեսան որ ձայնագիր մը կը պարունակէր մէկ գլանով: Ո՛րչափ մեծ եղաւ ներկաներուն զարմանքը, երբ տեսան որ գործիքին վրայ դրուած գլանը իմացուց նշնանակալին վերջին կամքը: Այժմ Ռուս դատարանները կ'ըզբաղին այն խնդրով թէ այս կերպով ձգուած կըտակ մը օրինապէս ընդունելի է թէ չ'է:

Զարմանալի Խաղախոսքիւն մը

— Բանի մը ամիսէ ի վեր Բարիլի ոստիկանութիւնը մարդ կը փնտռէր, որուն դէմ խարդախութեան համար բողոքներ բրած էին սենեկապանուհիներ, խորհարարուհիներ և սպասուհիներ: Այդ մարդը որ Շարլ Նալսիս կրա կը կոչուի, լրագիրներուն չորրորդ էջը ծանուցումներ հրատարակել կուտար, որոնցմով ինքզինքը առեւտրական ուղեոր կը ներկայացնէր և փափաք կը յայտնէր յարաբերութեան մէջ մոտենալու մանկամարդ և զեղանի և դրամ խնայած սպասուհիի մը հետ, անոր հետ ամուսնանալու և արեւտրական դործ մը բանալու համար: Ծանուցումները կը վերջանային սկզբնատառերով, որոնց ուղղուած պատասխանները այս ինչ նամակատան հասցէին պէտք է ղրկուէին: Լուիզ Բիլէ անուն աղջիկ մը որ յիշեալ անձին մեղսակիցն է, նամակները կ'առնէր նամակատունէն, և իսկոյն զանոնք գրողներուն մօտ կ'երթար, յատենելով թէ ամուսնացող երիտասարդը իր եղբայրն էր, որ առայժմ կը ճամբորդէր: Ժամագրութիւն մը կ'որոշուէր և Լուիզ Բիլէ թիկնածու կնոյ կը ներկայացնէր աղւոր երիտասարդ մը, սեւ մեծ պեխերով, որ իսկոյն ինքզինքը «իրցնել կուտար»: Ծրագրուած ամուսնութեան օրը կ'որոշուէր և նոյն իսկ հարսանեկան զգեստը կարել կը տրուէր: Բայց խաբեբայ փեսան կանխաւ միջոցը կը գտնէր իր «նշանած» ին խոստացած գումարները, որ դրամատան մը մէջ գրուած էր, իր անուան դարձնել: Այդ գործողութեան յաջորդ օրը դրամատան կը ներկայանար և դրամը գրպանելով՝ կ'իջարկէր զնէր: Այսպէս, երեք տարուան միջոցին, այս խաբեբայ մարդը քառսուն կիներ խաբած է, որոնց իւրաքանչիւրէն 10,000, 3000 և 5000 ֆրանք չորթած էր: Իր վերջին զոհերէն մէկը սպասուհի մը, որ ոստիկանութեան բողոքած էր արդէն, անցեալ շաբթու լրագրի մը մէջ ծանուցում մը կարդալով կասկածեցաւ թէ զինքը խաբող մարդունն է: Նամակ մը գրել տուաւ իր բարեկամուհիներէն մէկուն, լրագրին մէջ ցոյց տրուած հասցէին ուղղուած: Լուիզ Բիլէ այցելութեան եկաւ, զոր ձերբակալել տուաւ: Լուիզ յայտարարեց թէ ինք սպասուհի էր և թէ իրեն վերագրուած յանցանքին մէջ մաս չունէր: Իր ընկերն ալ ձերբակալուեցաւ, որ նմանապէս կ'ուրանայ իր գործած խաղախ արարքները:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ՆՄՈՅԵ ՄԸ ՀԻՆ ԲԱՐՔԵՐԷՆ

Հետեւեալ ծիծաղաշարժ երգը որ ասկէ 50 տարի առաջ Պոլսեցի կարգ մը թեթեալ բերի-տասարգաց ու օրիորդաց համար յօրինուած է եղեր, բարեկամ մը անոր մէկ օրինակը իր պա-պէն մնացած ձեռագիր թուղթերու մէջէն գտած ըլլալով, այս անգամ մեզի զրկած է՝ իբր նմոյշ մը հին բարքերու՝ «ՀԱՅԵԼԻ»ի մէջ ալ հրատարա-կելու խնդրանքով:

«ԺԱՄԱՆԱԿԻՍ ՕՐԻՈՐԴՆԵՐԸ»

Նոր մօտայի աղջիկները բալթօ սագօ կը հագ-նին:

Ուր որ երթան՝ եօրդան, տէօշէկ, չառըռ մէկ-տեղ կը տանին:

Աղջիկներու թեան շնորք չունին գուգլա պէպէք կը նմանին,

Նգրք.

Որը հարիւր որը հազար թօհաֆէին պարտք ունին,

Սանքի ասանկ սիւսեր կուտան՝ ո՞վ կը փխտէ վը-րանին:

Վէրէսիյէ Մաշաֆօճը ֆիստանով մը էրեթի՝
Կոտրտուելին երբոր տեսնաս՝ կըսես հիմա կը բրթի,

Սիւս ընելու համար շատը կը մնան միշտ անօթի,

Նգրք.

Որը հարիւր որը հազար, ևն.

Առտուը՞նէ մինչ իրիկուն այնային դէմը կեցած,
Սահաթ սահաթ քէռթուելով՝ փեթտած հաւ մըն է դարձած:

Բէք շատերուն երեսները ծակ ծակ մաղ մըն է դարձած,

Նգրք.

Որը հարիւր որը հազար, ևն.

Ինքնիրեննուն փեսայ կընտրեն, ինքնեննուն հարս կըլլան,

Ինքնիրեննուն էրիկ կառնեն, ըսելով թէ ի-մըս է այն:

Խօսք ու խրատ մտիկ չընեն, մեծերուն ալ բայ կուտան:

Նգրք.

Որը հարիւր որը հազար, ևն.

Իրար գան նէ՝ տէ՛յ իրիկուն բէնճիրէն բըռ-նած կայնին,

Եախըլըխը համալ մը անցնի՝ անոր վրայ կը մարին:

Դրացիէն խիպ չեն ըներ ոչ ալ ա՛օթ կը նա-յին:

Նգրք.

Որը հարիւր որը հազար, ևն.

Ասոնց հինգը մէկ կտրիճ մը չարժելը աշ-խարհք գիտէ,

Պատիւ ճանչցող աղջիկները մէջը չեն, անոնք զատէ:

Մնացածին ո՞վ կը նայի, վրան ո՞վ դուք կը նետէ,

Նգրք.

Որը հարուր որը հազար թօհաֆէին, ևն.

* *

ԺԱՄԱՆԱԿԻՍ ՊԱՐՈՆՆԵՐԸ

Նոր մօտայի կտրիճները սէթրի բալթօ կը հագ-նին,

Աթլաղ ելէկ, չուխա բանթօլ, սահաթ քէօս-թէկ վրանին,

Կըճըլըլը լապճին գալօշ, պօյուն պաղի ճի-տերնին,

Նգրք.

Հարիւրներով հազարներով թէֆէճին պարտք ունին,

Պախալներէն խասապներէն սօխախ սօխախ կը փախչին:

Բօմաթալը բօլքա մազեր քեաքիւլներէն կախ-ուած են,

Պըլըխներնին սիվրի սիվրի՝ խոռզի պէս ալ ցատկեն:

Ամեն գիշեր և կիրակի Բօնճաւեաներ կը վա-ղեն,

Նգրք.

Հարիւրներով հազարներով թէֆէճին, ևն.

Երկու պօնճուռ, վա՛յ մասնազել ֆռնկճէ ալ կը խօսին,

Աշուրներով ինքուրներով բարլախ սիւրմէ կը քօռին:

Աղջիկան մը երբ ըրասթ գան՝ կոտրտուելով կոտրտին,

Նգրք.

Հարիւրներով հազարներով թէֆէճին, ևն.

Պտրտիկ ֆէս, էրկան բիւսկիւլ աչքին վրայ
ծուռ դուռին .
Տասնոց թօնպախ մատնի մըն ալ պղտիկ մատն
է սալ ձեռքին .
Պոչ ճէպերը սառնըճի պէս քիւթիւր քիւթիւր
կը խօսին .

Նգրք .

Հարուրներով հազարներով թէֆէճիին են .

Պալըխճիին տղան զատել՝ զէնկինինէն դըժ-
ուար է .
Եախըշըխը համալն անգամ կըսէ քի ինք քի-
պար է ,
Ըղզակներով, ճէհէզներով զէնկին աղջիկ փըն-
տըւէ ,


Նգրք .

Հարուրներով հազարներով թէֆէճիին են .

Ասոնց հինգը մէկ աղջիկ մը չարժելը աչ-
խարհք գիտէ՝ ,
Պատիւ ճանչցող կտրիճները մէջը չեն անոնք
զատէ ,
Մնացածին ո՞վ կը նայի, վրան ո՞վ թուք կը
նետէ ,

Նգնք .

Հարուրներով հազարներով թէֆէճիին պարտք
ունին .
Պախալներէն խասապներէն սօխախ սօխախ կը
փախչին :



Վարժարանի մէջ .

Ուսուցչի մը հագած կրկնոցին անութին (գօլթուգ)
կարը քաղուած էր, գուարձախօս ուսանող մը զայն իւր
քովը նստող ընկերոջը ցուցնելով ըսաւ .

— Կը տեսնե՞ս, ուսումն ու գիտութիւնը դասատու-
ին գօլթուքին տակի քաջուած ծակէն գուրս կը նային կոր .

Այս խօսքին վրայ ընկերը բարձրաձայն կը ծիծա-
ղի: Ուսուցիչը խնդրէն տեղիակ կըլլայ ու կը պա-
տասխանէ :

— Այո՛, պարոններ, անմտութիւնն ու անպիտանու-
թիւնն ալ այն ծակէն ներս կը նային կոր :

— Ուրեմն պէտք է գոցել այդ պատուհանը, կը
կրկնէ գուարձախօսը բթին տակէն :

Պոչոյ արուարձաններէն գիւղի մը մէջ՝ եկեղեցւոյ
բահանները իրենց սենեակ մը կը յատկացնեն խորհրդա-
րանին կից, և որպէս զի ժողովուրդը հոնկէ ներս չի
մտնէ, խոշոր գիրերով հետեւեալ ազդարարութիւնը կը
փակցընեն սենեակին դռանը վրայ .

Քահանաներու սենեակ . մոտսքը արգիլեալ է
ժողովուրդին համար :

Խեղկատակ թաղեցի մը, գաղտագողի կերթայ
յիշեալ ազդարարութեան «բահաններու» բառին
առաջին ք. գիրը վարպետութեամբ մը աւելնով՝ անոր
տեղը Լ. գիրը կը դնէ

(Արդեօք ո՞րչափ խնդրացին դուարձասէր թաղեցի-
ները երբ կարգացին ասիկա) :

Զուարճասէր անձ մը լուրջ բարեկամի մը հետ
խօսակցութեան առթիւ՝ չափազանց կը գովէ մարմնա-
մարզութիւնը :

— Չիկայ—կըսէ—աշխարհիս վրայ ճիւղնասրիքի
պէս աղուոր բան մը: Մարդուս ուժը կ'աւելցնէ, կեան-
քը կ'երկարէ . . . :

— Բայց միթէ մէր նախնիքները մարմնամարզու-
թիւն կ'ընէին :

— (Ժպտելով) Իշտէ անոր համար ամէնքն ալ
մեռած են ա՛ . . . :

Երկու բարեկամներ .

— Եւայի համար կըսեն թէ բարի կին մըն էր,
արդեօք իրա՞ւ է .

— Կը հաւատամ, վասն զի այն ատեն երկրիս վը-
րայ Ազամէն դատ ուրիշ մարդ չիկար :

Խաթունի մը պատասխանը .

Երիտասարդ մը գեղեցիկ օրիորդի մը սիրահարեալ,
կուզէր զայն կնութեան առնուլ . բայց տեսնելով որ
աղջկան ծնողքը հաւանութեան կամ մերժման վերջնական
պատասխան մը չը տալէ զատ, ուրիշներու ալ ազդիկ—տես
կը հանեն, բարկացաւ և գնաց նորա ծնողացը ըսաւ .

— Ճանճմ, աս ի՞նչ բան է. երկու ամիս եղաւ հալէա
սանկ քէսէն քէս կտրողական պատասխան մը չը տուիք
ինձի. ինչո՞ւ սափսափայի կը ձգէք կոր. հէ՛մ լսածիս
նայելով, ինձմէ պաշխա 5—10 հոգիի ալ ցուցըցիք էք .

— Ի՞նչ խըրսլանմիշ կըլլաւ կոր, ես՝ վրում, ըսաւ
օրիորդին մամիկը, որ անկիւն մը նստած էր, ձան բազարը
տըր պու. իրաւ ես, շատ ուղոյներ կ'ըլլան կոր ամա,
խաթըրա միւրվէթ, հիմակու ճահիլներն ալ խափուն
թապիլէթի ըլլալնուն, տասը բսան հատը տէյթի աչկէ
չանցունես նէ՛ մէկ հատ մը չես կրնար զատել :

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (36)

ՌԲՆԷ ՏՐ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԳԱՐԾԱՐ-ՄԱՄՈՒԿ)



—Ա՛Տ, վերջապէս եկաք, բարեկամս, ըսաւ անոր. անհամբեր ձեզի կը սպասէի:

—Քնանալով, ըսաւ անգլիացին ժպտով մը:

—Հաւատացէք որ անհամբերութենէս կը քնանալի: Ա՛Տ, որովհետեւ նոր բան ունիմ ձեզ իմացնելու: Դուք անպատճառ վճուկ էք:

—Ի՞նչպէս:

—Լէնկ-Թա-Լանկի սպանութեան մասին ճիշդ գուշակեր էք:

—Ո՞վ է սպանիչը:

—Տիկին Լիուի մէկ զրացին. Չու, Պաթէօն տ՝Օո փողոցին մտաւաճառը, այն զոր Կարմիր-Մամուկ անուանած էին:

—Կը տեսնէք որ իրաւունք ունէի: Ո՞վ տեղեկութիւն տուաւ ձեզ:

—Տիկին Լիու ինքը:

Եւ երկարօրէն պատմեց Սօլ-Պրոտէի մօրմէն իմացածները:

Յետոյ անցաւ իր գիշերային պտոյտին քանդոնի փողոցներուն մէջ, ընկերակցութեամբ ոստիկանութեան վերատեսչին, և անցուցած փտանդներն այն աստիճան չափազանցեց որ բերքինս, երկար ատենէ ի վեր անոր քաջասրտութեանը ծանօթ, չկրցաւ զսպել ինքզինքը եւ անոր պատմութիւնը տեղ տեղ ծաղրեց:

Ուրիշ բան տեղի պիտի ունենար եթէ Մէնկ իմացուներ իր պտոյտին յեղակարծ վախճանը հաւաքեալ տարւոյ տան կակուղ անկողնին վրայ, բայց զգուշացաւ:

—Մինակ, վերջացուց, ահագին հառաչ մը արձկելով, բնաւ առաջ չգացի: Իրաւ, գիտեմ յանցաւորին անունը, բայց կրողը տանի զիս եթէ դու ըլլալը գիտեմ:

—Համբերութիւն, պարոն նախագահ, համբերութիւն, ըսաւ սըր Արթուր. գործին կէսն եղաւ. մնացեալն ինքնին պիտի կաարուի:

—Այո, թերեւ. բայց, հիմակուհիմա, ունեցած ժամանակիս կէսէն աւելին անցաւ գնաց: Իսկ դո՛ւք. նաւապետ, ձեր կախումը մարդուն հետ գործերնիդ

ի՞նչ ըրիք: Այդ պատժին ահագին բազմութիւն ներկայ գտնուած ըլլալու է: Իրաւ շատ ուրախ եմ ուշ մնացած ըլլալուս:

—Հատ ուշ չմնացիր. պատիժն ի գործ չդրուեցաւ:

—Ի՞նչ կ'ըսէք:

—Ճշմարտութիւնը. Գատապարտները պատրաստ էին. մինակ դահիճը օգնականներն ու կախողանները կը պահէին:

—Ուրեմն Ռուսի մեր քիթին խնդուց. Աիճակն որոշուած է. ինք պիտի կախուի, և...

—Օ՛հ, այդչափ շուտ մի՛ առաջանաք, ընդմիջեց Բերքինս. Ռուսի մէկուն քիթն չխնդաց. Միայն քիչ մը ուշ մնաց, բայց այս իրիկուն, ժամը եօթնին, ապահով եղէք որ իր պաշտօնը խղճի մտօք ի գործ պիտի դնէ: Մեր ծրագիրներուն յաջողութեանը համար, այսպէս ըլլալը նախընտրելի է: Հետեւապէս, շատ մի՛ նեղանաք անոր գէմ:

—Ի՛նչ, միշտ ձեր ուղածին պէս ընելու է: Սակայն գիտէք որ յոյս ձեր վրայ է մարդասպանը գտնելու համար, հիմակ որ իր անունը ծանօթ է:

—Հարկա՛ւ: Այժմ սեղան նստինք:

Մանտաբէնը, որուն ամեն հողերը ցրուելու առաւելութիւնը ունէին այս երկու բառերը՝ «սեղան նստինք» պատասխանեց անգլիացիին թեւ մտնելով, եւ ճաշասրահ անցան:

Քանի մը վայրկեան ետքը, ինքզինքը բոլորովին տուած համեղ երէի մը միտին, որկրամուկ նախագահը մոռցած էր Սօլ-Պրոտէն, Չուեն, ծովահէնները և մինչեւ իսկ պամպուկի հարկը հարուածները. Եւ այնքան շատ պատիւ ըրաւ նաւապետին սեղանին որ երբ ժամը ճին սա իմացուց թէ ժամանակ էր մեկնելու եթէ կուզէր ներկայ գտնուիլ պատժին դրժագրութեանը, ձեռքերը խաչաձեւելով լայն կուրծքին վրայ, պատասխանեց:

—Կը խնդրեմ, աղնիւ և սիրելի բարեկամս, ատիկա մի՛ պահանջէք ինէ: Ես մեղմ մարդ մըն եմ. այդ այդ տեսարանները կը տխրեցնեն զիս: Ասկից վատ, անանկ ճաշեցի որ կը փափագիմ զերծ մնալ տաժանելի յուզումներէ:

Եւ, քշուելով մինչև լայն թիկնաթոռ մը զօրքանի մը վայրկենէն ի վեր ըզձոտ աչքերով կը փայփայէր, քանդոնի եղբունադատ տտենին նախագահը կռնկի վրայ ինկաւ, աչքերը գոցելով:

—Ինչպէս որ կուզէք, քաջ Մէնկս. ինչպէս որ կը կամիք, պատասխանեց Էթէնի հրամատարը: Արդէն հոն երթալու համար ձեզի պէտք չունիմ. Երազելով մեզի սպասեցէք:

—Այո, այսպէս աւելի աղէկ է: Սիրտս չափազանց զիւրազգած է շարժարանքի: Խեղճ մարդիկը. Ա՛Տ, բերքինս, պատուական խոհարար մը ունիք. Եւրոպայ իրաւ որ այդէ տեղ է. Անգլիան մեծ երկիր մըն է. Օ՛Տ, Ձինստանէն նուազ մեծ, բայց սակայն մեծ, շատ մեծ երկիր մըն է:

Մեծարոյ պաշտօնատարը ա՛լ կը սկսէր բաժնի չհասկնալ. Ստամբուլին երախտագիտութիւնը միտքին մէջ կը կռուէր հայրենասիրութեան հետ:

—Մեկնինք, ըսաւ սրբ Երթուր մաքսախոյսին ալ վայրկեան մը չենք կրնար կորսնցունել:

Արդարեւ մօտեցած էր քիթֆիթի կողմէ իր հայրենակիցներուն տրուած ժամադրութիւնը, ներկայ գտնուելու համար դատապարտեալներուն մեկնմանը:

Սեղմեցին զգայնօտ դատաւորին ձեռքը, բարի մարտդրութիւն մաղթելով անոր, և դուրս ելան:

Նուազ բան կէս ժամ բալիէ յետոյ անցան քաղաքին պարսպադռնէն, բանա երթալու համար Պենկալցի նիզակաւումներուն հետ որք հրաման ստացած էին ծովահեններուն վրայ հսկել:

Խեղճերը առտուընէ ի վեր գիտէին թէ տանջաւայրը պիտի առաջնորդուին. ծանուցած էին անոնց թէ աղէտալի ժամն հասած էր:

Որովհետեւ պիտի կախուէին, կը շնորհուէր իրենց փոխադրութեան եղանակը որ ի գործ կը դրուէր գլխատութեան դատապարտուածներուն համար, զոր կը տանէին եղէգէ վանդակներով, ուր կ'ըկուած և գլուխին դուրս հանած ծակէ մը ալատ էին դիտելու արիւնայեղ տեսարանները որք իրենց առջև տեղի կ'ունենային, մինչեւ որ մեռնելու կարգն իրենց գայ:

Այս անգամ, առանց գլխանոցի և պարզապէս ձեռքերնին ետեւին կապուած, բակին մէջ կը սպասէին անյողողդ:

Մինակ Բէյ-Հօ մտահոգ ու խուլ կերպարանք մը ունէր: Աջքերը սովորականէն նուազ փայլուն էին: Կարծես չէ թէ կ'ը վախնար այլ կը տառապէր. փոխանակ վեր բռնելու իր գլուխը ինչպէս ըրած էր իր դատաւորներուն առջեւ, կուրծքին վրայ ձգած էր զայն: Յատկապէս ծանրաթախիծ մտածման մէջ թաղուած էր, վասն զի երբ լսեց մեկնումի նշանը, սարսուռաց: Բայց շուտով ինքզինքնին եկաւ և իր ընկերներուն պէս հաստատաբայլ հեռացաւ բանտէն:

Ծովահենները դուրս ելլելուն պէս երկուք առ երկուք կեցան ձիաւորներուն մէջտեղ, և սպասին մէկ հրամանով, թափօրը ճամբայ ելաւ:

Քսանըհինգ երեսուն վայրկեանէն հասան բամբուլի

տանջաւայրն որուն մէջտեղը հինգ կախաւորները երկինք կը ցցէին իրենց մահատուեր կմախքները:

Բազմութիւնը մեծ էր. զօրքերօ կրկին շղթայ մը դժուարաւ հեռու կը պահէր հետաքրքիրներն այն ընդարձակ տեղէն ուր կը սպասէին դահիճն ու օդնականները. ճամբայ բացուեցաւ դատապարտեալներուն՝ անողորմ կեցեցներով ողջունելով զանոնք:

Վերջապէս կը մօտենար հովը կախաւորներուն վերելը կը տատանէր ճարպօտ չուանները որք շարժուն հանդոցներով կը վերջանային:

Յանկարծ լուութիւն տիրած էր: Ներկաները բան մը կ'որսնցունէին չէին ուզեր զարհուրելի տեսարանէն:

Ծովահեններուն իւրաքանչիւր զոյգը տրուած էր այն ցիցին տակ ուսկից պիտի կախուէր. Դահիճը չորս օգնական միայն ունենալով, գործողութիւնը բանիցս պիտի կրկնուէր:

Հինգ արարուածով թատերախաղ մըն էր որ կը ներկայացուէր անգլիական գաղթականութեան:

(Շար.)

ԱԶԻ

Երջանկայիշատակ ՄԻԽԹԱՐ ԱՔԲԱ Հօր յոբելանսին առթիւ Վենետիկի տպարանէն պատրաստուած ՄԻԽԹԱՐ անուն պատկերազարդ հատընտիր գիրքը որ ամեն բանասիրաց ընթերցմանը իրաւամբ արժանի է, կը ծախուի Վառնա Ա. Զարպհանէլեանի Հայկական գրատունը, թղթատարի ծախքը գրատան վրայ ըլլալով գին 6 Փրանք:



Մ. ԵՐԱՆՈՍԵԱՆ

Կօշկակարի Խանութ:

Ձար Պօրիս փողոց
Աղջկանց վարժարանին կից:

Կը պատրաստուին և կը գտնուին պատրաստ ամեն տեսակ Եւրոպական ճաշակաւ կօշիկներ, էրիկ մարդու կանանց և տղայոց համար. ապւրանք գիմաքկուն. գիներ խիստ չափաւոր, առաջին գիմովը արդէն պիտի համոզուի:

Печатница „Взаимность“ — Варна.